ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

27 հոկտեմբերի 2016 թվականի N 149-Ա

Ս. ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 164-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով *Ս. Կիրակոսյանի* անձնական դիմումը՝ **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Վերին Պտղնիի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն ***Սուսաննա Կիրակոսյանին*** տրամադրել 2016 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդը՝ 20 աշխատանքային օր՝ 2016 թվականի նոյեմբերի 1-ից մինչև նոյեմբերի 28-ը ներառյալ:

2. ***Սուսաննա Կիրակոսյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Վերին Պտղնիի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության ընտանեկան բուժքույր՝ ***Սուսաննա Եղիազարյանի*** վրա:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Վերին Պտղնիի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության ընտանեկան բուժքույր՝ ***Սուսաննա Եղիազարյանին*** և <<Աբովյանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն՝ ***Վարդան Մանուկյանին*** ապահովել <<Վերին Պտղնիի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության սպասարկման տարածքի բնակչության առաջնային բժշկական օգնության և սպասարկման իրականացումը՝ <<Աբովյանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության համապատասխան մասնագետի *(ընտանեկան բժիշկ՝ Գայանե Հայրապետյան)* կողմից:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2016 թվականի հոկտեմբերի 27
ք. Հրազդան